ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

12.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/168

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20133-18 գրությամբ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 02.11.2018թ. թիվ 09/1719 գրության հիման վրա, 06.11.2018թ. թիվ 26-3/20133-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.11.2018թ. թիվ 6/1118-2 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Աճուրդի թիվ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Հիմնադրամի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դրոշմանիշային վճարի գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ 24 660 ՀՀ դրամի չափով:

Սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային բազայի հարկատուի անձնական էջում հարկային պարտավորություններ բաժնում նման տեղեկատվություն առկա և հասանելի չէ, ավելին՝ դրոշմանիշային վճարի վերաբերյալ տեղեկատվություն ընհանրապես նախատեսված չէ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովին ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանքում ներառված է միայն նշված պարտավորության մասին տեղեկությունը, այնինչ նշված օրվա դրությամբ Ընկերությունը ունեցել է 1 548 881 ՀՀ դրամ գերավճար, ինչը փաստվում է նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից 17.10.2018թ. տրամադրված N 2809 տեղեկանքով: Այսինքն պետության հանդեպ 02.10.2018թ. դրությամբ Ընկերությունը ընդհանրացված հաշվարկով չի ունեցել պարտավորություններ, այլ ունեցել է տարբերության չափով 1 524 221 ՀՀ դրամ գերավճար:

«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հաշվի առնելով 01.01.2018թ.-ից ՀՀ-ում կիրառվող հարկերի և պարտադիր վճարների մասով միասնական հաշվի միջոցով պարտավորությունների հաշվառման սկզբունքը և հարկային մարմնի տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա 02.10.2018թ. դրությամբ անձնական քարտի քաղվածքում նշված տեղեկությունները պարտավորությունների բացակայության և առկա

գերավճարիմասին համարել է, որ 02.10.2018թ. դրությամբ պետության հանդեպ չունի չկատարած հարկային պարտավորություններ, ինչից ելնելով էլ հայտում ներկայացրել է հավաստի տեղեկատվություն: Բացի այդ Ընկերությունը 02.10.2018թ. ունեցել է հաշվարկով 1 524 221 ՀՀ դրամ գերավճար»:

Ամփոփելով վերոգրյալը Ընկերությունը խնդրել է համարել, որ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի սահմանափակման խախտում և ունենալով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ընդհանուր 1 524 221 ՀՀ դրամ գերավճար, հայտով ներկայացրել է հավաստի տեղեկատվություն:

«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 08.11.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստերը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.11.2018թ. թիվ 09/1719 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ էր ներկայացրել «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն: Վերջինս գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 2 որոշմամբ թիվ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ

ենթակետի դրույթներով՝ «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի քարտուղարը 2018 թվականի հոկտեմբերի 9-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հակտեմբերի 17-ի թիվ 3 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.10.2018թ. տրամադրված եզրակզցության համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը:

Գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերությունը համակարգի միջոցով ներկայացրել է գնահատող հանձնաժողովին ուղղված գրություն /ԱՀՔ/ քաղվածք /taxservice.am/ ինչպես նաև թղթային ձևով ՀՀ ՊԵԿ-ից ստացված պարտավորությոնների վերաբերյալ տեղեկանք, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայանելու օրվա դրությամբ ունի 24 660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն՝ դրոշմանիշային վճարների մասով, որն էլ ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 16.10.2018թ. տրամադրված տեղեկատվության հանդիսանում է եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 08.11.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/168 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/168 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեքբերման ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***02.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն:

2. «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 11-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով ներկայացրել է վերջնական առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 81 360 ՀՀ դրամ, իսկ 12-րդ չափաբաժնի համար՝ 435 000 ՀՀ դրամ:

3. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 08.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ /Հավելված 2/ թիվ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 16.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 24 660 ՀՀ դրամի չափով:***

5. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 17.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող՝ 24 660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է թույլատրելի առավելագույն շեմը՝ 11-րդ չափաբաժնի մասով՝ 813,6 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 4,350 ՀՀ դրամ:

6. Էլեկտրոնային աճուրդի Գնահատող հանձնաժողովը 23.10.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը համակարգի միջոցով ներկայացրել է գնահատող հանձնաժողովին ուղղված գրություն /ԱՀՔ քաղվածք /taxservice.am/, ինչպես նաև թղթային ձևով ՀՀ ՊԵԿ-ից ստացված

պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայանելու օրվա դրությամբ ունի 24 660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն՝ դրոշմանիշային վճարների մասով, որն էլ ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 16.10.2018թ. տրամադրված տեղեկատվության հանդիսանում է եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

7. Նույն արձանագրության 1.3 ենթակետով կայացված որոշմամբ Գնահատող հանձնաժողովը մերժել է «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի հայտը թիվ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20133-18 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 02.11.2018թ. թիվ 09/1719 գրությունը և կից փաստաթղթերը, «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի 06.11.2018թ. թիվ 6/1118-2 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից

ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեքբերման ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***02.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն:

«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 11-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով ներկայացրել է վերջնական առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 81 360 ՀՀ դրամ, իսկ 12-րդ չափաբաժնի համար՝ 435 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 08.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ /Հավելված 2/ աճուրդի թիվ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 09.10.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 20-րդ կետի հիման վրա 16.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 24 660 ՀՀ դրամի չափով:***

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 17.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող՝ 24 660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է թույլատրելի առավելագույն շեմը՝ 11-րդ չափաբաժնի մասով՝ 813,6 ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 4,350 ՀՀ դրամ:

Էլեկտրոնային աճուրդի Գնահատող հանձնաժողովը 23.10.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը համակարգի միջոցով ներկայացրել է գնահատող հանձնաժողովին ուղղված գրություն /ԱՀՔ քաղվածք

/taxservice.am/, ինչպես նաև թղթային ձևով ՀՀ ՊԵԿ-ից ստացված պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայանելու օրվա դրությամբ ունի 24 660 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն՝ դրոշմանիշային վճարների մասով, որն էլ ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 16.10.2018թ. տրամադրված տեղեկատվության հանդիսանում է եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Նույն արձանագրության 1.3 ենթակետով կայացված որոշմամբ Գնահատող հանձնաժողովը Աճուրդի թիվ 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով մերժել է «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 02.10.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 24 660 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.11.2018թ. գրությամբ ներկայացրել է 02.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության 17.10.2018թ. թիվ 2809 տեղեկանքը, համաձայն որի «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի 02.10.2018թ. դրությամբ ունեցած 24 660 ՀՀ դրամ պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 02.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը

ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2018/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20133-18 գրությամբ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00043772) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ